ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-32

«05» 03 2021թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2021 թվականի մարտ ամսվա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար՝ Գ. Ներսիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ, 0231-5-29-35

ՈՐՈՇՈՒՄ № 3-Ա
01.03.2021

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչներ՝ Միեր Վաղարշակի Մանուկյանը,Ադունիկ Սուրենի Մանուկյանը,Սյուզաննա Միերի Մանուկյանը և Դիաննա Միերի Մանուկյանը դիմել են Արմավիրի մարզի, Ոսկեհատ համայնքի Երիտասարդական փող, թիվ 16 հասցեում գտնվող իրենց պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 14.03.1992 թ. թիվ 5 որոշման 0.0755 հա օրինական հողամասին, օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքի վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անհատույց վերականգնել Արմավիրի մարզի, Ոսկեհատ համայնքի Երիտասարդական փող, թիվ 16 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ բաղաքացիներ Միեր Վաղարշակի Մանուկյանի,Ադունիկ Սուրենի Մանուկյանի,Սյուզաննա Միերի Մանուկյանի և Դիաննա Միերի Մանուկյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը, 0.0755 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն 154.7քմ.՝ կառուցված 2000թ, Լողավազան 40.1քմ. կառուցված 2000թ, Ջերմոց 55.1քմ. կառուցված 2000թ, Ծածկոց 64.5քմ. կառուցված 2000թ, պարիսպ 0.8քմ. կառուցված 2000թ,) նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են << Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջներին: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում բաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենքի-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:
3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Միեր Վաղարշակի Մանուկյանի,Ադունիկ Սուրենի Մանուկյանի,Սյուզաննա Միերի Մանուկյանի և Դիաննա Միերի Մանուկյանի սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. 0026-0008 ծածկագրին տալ Երիտասարդական փող, թիվ 16 հասցե:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ